ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ **90-Լ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի N 45-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի թիվ 270-Լ որոշմամբ հաստատված ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 13-րդ ենթակետի պահանջների համաձայն՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի մայիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը ենթակա պետական մարմինների ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները) հաստատելու և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2022 թվականի մարտի 14-ի թիվ 235-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 45-Լ հրամանի հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Ուժը կորցրած ճանաչել 3-րդ կետի 2-4-րդ ենթակետերը.
2) 3-րդ կետի 5-րդ ենթակետը խմբագրել հետևյալ նոր բովանդակությամբ՝

«5) ծառայողը (աշխատողը), այդ թվում պարգևատրման հրամանի տրման օրվա դրությամբ կադրերի ռեզերվում գրանցված ծառայողը պարգևատրվում է հաշվետու

ժամանակահատվածում փաստացի աշխատած աշխատանքային օրերի համար՝ առնվազն այդ օրերի համամասնական հաշվարկով,».

3) 5-րդ կետը «(աշխատողներին)» բառից հետո լրացնել «, Պետական ռեզերվների գրասենյակի աշխատակիցներին» բառերով.

4) 6-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«ՀՀ ՆԳՆ և նրա ենթակա պետական մարմինների (բացառությամբ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության և Պետական ռեզերվների գրասենյակի) քաղաքացիական ծառայողներին և փորձագետներին (մեկ տարի ժամանակահատվածով ներգրավված) յուրաքանչյուր ամիս պարգևատրում տրվում է հիմնական աշխատավարձի 16 %-ի չափով:».

5) 7-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

ա. «պետական պահպանության գլխավոր վարչության» բառերը փոխարինել «ոստիկանության գվարդիայի» բառերով,

բ. 7-րդ կետի 5-րդ ենթակետից հետո լրացնել 6-9-րդ ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) գվարդիայի հրամանատարի տեղակալ՝ 50000 (հիսուն հազար) դրամ,

7) գնդի հրամանատար՝ 10000 (տասը հազար) դրամ,

8) կրտսեր տեսուչ-հերթապահ՝ 4000 (չորս հազար) դրամ,

9) հատուկ սպառազինության և մարտավարության գնդի դասակի հրամանատարի օգնական, ինքը և ջոկի հրամանատար՝ 8000 (ութ հազար) դրամ:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, որի գործողությունը տարածվում է 2025 թվականի նոյեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ին:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

10.12.2025

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ